# ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
## Ա.Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԹԵՄԻ
## WESTERN PRELACY
### OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
### H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: info@westernprelacy.org Website:www.westernprelacy.org




*<u>ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ՀԱՆԴԷՊ ՀՈԳԱԾՈՒԹԵԱՆ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՐՏԱՅԱՅՏՈՒԹԻՒՆ</u>*

## ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԱՅՑԵԼԵՑ ՀՈԼԻՎՈՒՏԻ CHILDREN'S HOSPITAL ՀԻՒԱՆԴԱՆՈՑԸ

Ինչպէս մեր Դատին ու Հայ Դպրոցին հանդէպ իր յանձնառութիւնը, նոյնպէս ալ 2011ը Հայ Մանուկի Տարի հռչակելու Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի որոշումը Թեմիս շնորհուած հովուապետական այցելութեան առիթով գործնական արտայայտութիւն կը գտնեն մէկէ աւելի ձեռնարկներով ու այցելութիւններով:

Այս ծիրին մէջ, ու Կլենտէյլի Memorial Hospital իր այցելութենէն քանի մը օր ետք, Վեհափառ Հայրապետը Հինգշաբթի, 13 Հոկտեմբերի կէսօրին այցելեց Հոլիվուտի Children's Hospital հիւանդանոցը եւ աղօթք եւ օրհնութիւն բաշխեց հիւանդ մանուկներու, անոնց ծնողներուն ու հիւանդանոցի անձնակազմին:

Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան, Ազգ. Կեդրոնական Վարչութեան ու Թեմիս ժողովականութեան ներկայացուցիչներ կը գտնուէին Վեհափառի կողքին: Հիւանդանոցի մուտքին, հայրապետական շքախումբը դիմաւորուեցաւ նահանգային խորհրդարանի անդամ Քեւին Տըլիոնի, հիւանդանոցի հոգեւոր հարցերու պատասխանատու Պատ. Տակմար Կրեֆի, փոխ նախագահ Կէյլ Մարկոլիսի եւ այլ պատասխանատուներու ու հայ բժիշկներու կողմէ, ապա առաջնորդուեցաւ կարգ մը սենեակներ, այցելելու համար խնամք ստացող մանուկներու: Անոնց շարքին էր խնամքի կարօտ նորածին մը:

Հիւանդներուն այցելելէ ետք, Վեհափառ Հայրապետն ու ընկերակիցները պատշաճ հիւրասիրութեան արժանացան հիւանդանոցի պատասխանատուներուն կողմէ: Հիւրընկալներու ողջոյնի խօսքերուն ի պատասխան, Վեհափառ Հայրապետը դրուատիքով արտայայտուեցաւ բժիշկներուն, հիւանդապահներուն ու առհասարակ հիւանդներու կարիքները հոգացող անձնակազմին մասին, վեր առնելով անոնց անխտրական կամքով սպասարկելու ոգին ու նուիրեալ աշխատանքը: Ան շեշտեց, որ Ամերիկայի մեծութիւնը կը կայանայ բազմաթիւ ազգերու, մշակոյթներու եւ լեզուներու համերաշխ գոյակցութեան մէջ, որ ահաւասիկ արտայայտութիւն կը գտնէ այս հիւանդանոցի ծառայական կեանքին ճամբով: Ան նկատել տուաւ, որ մարդիկ ու յատկապէս հիւանդներ,

ֆիզիքական խնամքի կողքին, կը կարօտին նաեւ հոգեւոր ու բարոյական խնամքի, զօրակցութեան, աշխատանք՝ որուն մէջ բժիշկ ու հոգեւորական լծակից են իրարու, իսկ այս երկուքին միջեւ գործակցութիւնը կը յուսադրէ մարդը:

Յանդիպումը վերջ գտաւ յուշանուէրներու փոխանակումով:

## HIS HOLINESS CATHOLICOS ARAM I VISITS CHILDREN'S HOSPITAL

On Thursday, October 13, 2011, H.H. Catholicos Aram I visited Children's Hospital Los Angeles where he blessed patients, staff, and the newly opened Anderson Pavilion.

Upon their arrival, His Holiness and entourage, comprised of H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, and Councils members, were welcomed by State Senator Kevin de Leon, Rev. Dagmar Grefe, Manager of the Department of Spiritual Care and Clinical Pastoral Education, and Gail Margolis, Vice-President of Government Relations and Public Policy at Children's Hospital.

His Holiness was ushered to the Neonatal Intensive Care Unit where he blessed a newborn Armenian baby and the baby's family.

His Holiness was then escorted to a reception hosted by the Hospital in his honor. Ms. Margolis formally welcomed His Holiness and expressed what an honor it was to have him there. She then welcomed State Senator de Leon who sais that he was "humbled and honored to have His Holiness at this amazing hospital". He shared with His Holiness that he considered his presence as "an amazing gift" and expressed his appreciation for the Pontiff's decision to "bless this hospital with his presence". Senator de Leon also praised the area's Armenian-American community whose "accomplishments have contributed so much to the rich tapestry of the region". Shushanna Sarkissyan, and Armenian staff nurse, also shared her appreciation to the Pontiff for visiting and shared how very proud she was to have him there. Rev. Dagmar expressed her appreciation too and stressed how important it was to have such an important religious figure visit their hospital.

His Holiness then addressed saying, "in 10 minutes, I was able to discern two things, the interaction between medical care and pastoral care", and said "that is the way it should be. These two together enrich and compliment each other". His Holiness said he admired that "staff and family members were together and that the sense of community and service was evident. Service of our community is at the heart of our and all religions", said His Holiness, and directed the faithful to "serve humanity without discrimination".

Before leaving the hospital, His Holiness also blessed and gifted a special Pontifical commemorative cross to a young patient.